



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Բաղումյան Սիրանուշ
ԵՊՀ, Պատմության ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Ա. Մովսիսյան
Էլ. փոստ՝ siranush.baghumyan@mail.ru

ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ԿՈՂՄԻՑ ՀՊԱՏԱԿԵՑՎԱԾ ՈԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԹՎԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՓՈՐՁ

Հայկական լեոնաշխարհը Բ.ա. IX դարում թևակոխեց պատմական զարգացման որակապես նոր շրջափուլ: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Հայկական լեոնաշխարհում Նաիրյան համադաշնության հիմքի վրա վեր խոյացավ Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) համահայկական թագավորությունը: Ուրարտուն դարձավ Հին Արևելքի հզորագույն պետություններից մեկը, որի քաղաքական ազդեցությունը տարածվում էր ինչպես հարակից, այնպես էլ հեռավոր երկրներում:

Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորությունը հզորության գագաթնակետին է հասնում Արգիշտի Ա-ի (Բ.ա. 786-764 թթ.) կառավարման ժամանակաշրջանում [9, 5]:



Նկար 1. Արգիշտի Ա-ին (Բ.ա. 786-764 թթ.)

Արգիշտին իր կառավարման հենց սկզբից քայլեր ձեռնարկեց թագավորության ընդարձակման ուղղությամբ՝ մի տարվա ընթացքում արշավանքներ ձեռնարկելով երկրի տարբեր ուղղություններով: Ի վերջո, նրան հաջողվում է ստեղծել հզոր աշխարհակալություն, որը մեծ սպառնալիք է դառնում ժամանակի հզոր գերտերությունների համար:

Արգիշտի Ա-ի վարած քաղաքականության շնորհիվ թագավորության սահմանները հյուսիսում ձգվում էին մինչև Ճորոխի ավազան, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը և Չըլդըր լճից դեպի հյուսիս ընկած շրջանները, արևմուտքում և հարավ-

¹ Մենուան ուներ երկու որդի՝ Արգիշտինևհնուշպուան (Ունուշպուա, Սուճրա): Արգիշտին շարունակեց երկրի կառավարումը, իսկ ինչ վերաբերվում է նրա եղբորը՝ Ինուշպուային, ապա վերջինիս մասին մի քանի արձանագրություններ են պահպանվել, որոնցից մեկը գտնվում է Վանի «Կուրշու-Ջամի» մզկիթում: Ամենայն հավանականությամբ, հորեղբոր՝ Սարդուրու պես բռնել էկրոնական ուղին և դարձել Մուսասիրի գլխավոր քուրմը:

արևմուտքում՝ Եփրատի վերին և միջին հոսանքները, հարավում՝ մինչև Ասորեստան, արևելքում մինչև Ուրմիա լճի հյուսիսային և արևելյան ափերը:
Արգիշտիի նվաճումների վերաբերյալ հիմք է արքայի թողնած «Խորխոռյան տարեգրություն»-ը [11]²:



Նկար 2 և 3. «Խորխոռյան տարեգրություն»

Տարեգրությունում հիշատակվում են մի շարք երկրներ, որոնց վրա արքան իր գերիշխանությունն է հաստատել և վերջիններս հարկադրված են եղել վճարելու արքայի սահմանած հարկը: Վերջիններս ժամանակ առ ժամանակ փորձել են դուրս գալ ուրարտացիների³ գերիշխանությունից, սակայն ակնհայտ է, որ Արգիշտին կրկին ենթարկել և մեծ թվով ռազմագերիներ է բերել երկրի կենտրոնական շրջաններ: Միայն մեկ արշավանքի ընթացքում արքան երկրի բուն տարածք էր բերում հազարից ավել ռազմագերիներ: Իսկ այն, որ գահակալման ընթացքում արքան հզոր գերտերություն է ստեղծում և նվաճում մեծ թվով երկրներ, հիմք է տալիս պնդելու, որ ռազմագերիների թվաքանակն իսկապես մեծ է եղել:

Փորձենք միայն «Խորխոռյան տարեգրությունում» պահպանված տեղեկությունների հիման վրա ներկայացնել Արգիշտի Ա-ի հպատակեցրած ռազմագերիների թվաքանակը:

«Խորխոռյան տարեգրություն»-ում ներկայացված տեղեկություններն Արգիշտի Ա-ի արշավանքների ուղղությունների և թագավորություն բերված ռազմագերիների թվաքանակի վերաբերյալ: Հիմք ընդունելով «Խորխոռյան տարեգրություն»-ը՝ փորձենք ներկայացնել ընդամենը պատկերը՝ պարզելու, թե որ տարածքից ինչքան

² 1827 թվականին ֆրանսիական Ասիական ընկերությունը Վան գործուղեց արևելագետ Ֆ. Է. Շուլցին, ով ընդօրինակեց մոտ 40 արձանագրություններ՝ դնելով ուրարտերենի ուսումնասիրության հիմքը: Վերջինս 1828 թվականին հայտնաբերել է «Խորխոռյան տարեգրություն»-ը, որը ցայսօր հայտնի ուրարտական ամենամեծ արձանագրությունն է: «Խորխոռյան» ութ սյունակների արձանագրություններից առաջին յոթն են պարունակում Արգիշտի Ա-ի ձեռնարկած արշավանքների նկարագրությունները, իսկ վերջին՝ ութերորդ սյունակում գրված է արքայի անեծքը նրանց հասցեին, ովքեր կփորձեն վնասել արձանագրությունը:

³ «Ուրարտու» և «ուրարտացի» եզրույթներն աշխատանքում գործածվում են ոչ թե էթնիկական, այլ ժամանակային իմաստով:

ստրուկ է իր հետ բերել արքան: Արձանագրությունը սկսվում է «նույն տարում երրորդ անգամ զինվորներ գնդեցի» արտահայտությամբ: Ակնհայտ է, որ ևս երկու արշավանք է ձեռնարկել արքան: Դժբախտաբար, արձանագրության առաջին սյունակը խիստ վնասված է և չգիտենք թե, որ ուղղությամբ է արքան արշավել և ինչքան ռազմագերի է իր հետ բերել թագավորության տարածք: Այնուհետև Արգիշտին հիշատակում է Դիաուխի (երկիրը), որը հպատակեցնելուց հետո գրավում է Շերիագի երկիրը, հասնում մինչև Բուֆի քաղաք, արշավում Ջաբախա՝ հասնելով մինչև Սիրիմուֆարա լեռը՝

i-ku-ka-a-ni MU ši-[šú]-ha-ni LÚhu-ra-di-ni-li ú-e-li-du-bi uš-ta-di ^mDi-a-ú-e-hi-ni-e-di LUGÁL ^mDi-a-ú-e-hi LUGÁL-nu du-ú-bi ha-ú-bi ^{KUR}Še-ri-i-a-zi URU^{MEŠ} GIBÍL-bi É.GAL^{MEŠ} har-har-šú-bi ku-tè-a-di pa-r[i ^U]RU^{Pu}-ti-e sal-ma-at-hi ^{KUR}Bi-a-ni ^{KUR}Hu-šá-ni 'a-al-du-bi an-da-ni ^{KUR}Tar-i-ú-ni uš-ta-a-di ^{KUR}Za-ba-a-ha-a-e-ú-e e-di-i-a ha-a-ú-bi ^{KUR}Za-ba-a-ha-a-e-ši-i-li ku-tè-a-di pa-a-ri-e ^{URU}Ú-zi-na-bi-tar-na-a pa-ri ^{ŠAD?}Si-ri-mu-tar-a ^{ŠAD?}ba-ba-ni an-da-ni ^U[RU]Ma-qa-al-tú-ni ^{KUR}I-ga-ni-ni 'a-al-du-bi ši-a-di ^mE-ri-a-hi-ni-ni-e ^{KUR}ni-e-di uš-ta-di ^{KUR}A-bu-ni-i-e-di ha-ú-bi ^{URU}Ú-ri-e-i-ú-ni URU LUGÁL-nu-si [^{KUR}]Ú-i-tè-ru-hi-ni-i

«...արշավեցի Դիաուխի (ցեղի) վրա... արքայի Դիաուխի (ցեղի) հպատակեցրի(?), գրավեցի Շերիագի (երկիրը), քաղաքները այրեցի, ամրոցները ավերեցի: Կտրում էի մինչև Բուֆի (քաղաքը): Բուն (?) Բիանի (և) Խուշանի (երկրները) անջատեցի(?) ամբողջը (?) Թարիունի (երկրից): Արշավեցի Ջաբախա (երկրի) վրա, գրավեցի Ջաբախա (երկրի) գավառը (?): Կտրում էի մինչև Ուզինաբիթարնա (քաղաքը), մինչև Սիրիմուֆարա լեռը: Ամբողջը (?) Մակալթունի քաղաքը Իյանի (երկրից) անջատեցի (?): Ելա էրիախի երկրի վրա, արշավեցի Արունի (երկրի) վրա: Գրավեցի Ուրեյունի քաղաքն արքայական Վիտերուխի (երկրի)» [4, 6]:

Ամփոփելով այդ ժամանակաշրջանում կատարած արշավանքները՝ Արգիշտին նշում է, թե քանի ռազմագերի է իր հետ տարել՝

X LIM IX LIM II ME LV ár-še X LIM I ME XL LÚZAB^{MEŠ} še-e-hi-e-ri-e XX LIM III LIM II ME LXXX ^{SAL}ú-e-di-i-a-ni PAP V a-ti-bi II LIM VI ME LXXV LÚta-ar-?šú?-a-ni MU a-li-ki za-áš-gu-bi a-li-ki še-hi-e-ri a-gu-bi I LIM I ME IV ANŠU.KUR.RA^{MEŠ} pa-ru-bi XXX LIM V LIM XV ^{GUD}pa-hi-ni X a-ti-bi I LIM VIII ME XXIX ^{UDU}šú-še^{MEŠ}

«Տասնինն հազար երկու հարյուր հիսունհինգ պատանի (քշեցի), տասը հազար հարյուր քառասուն զինվոր երիտասարդ, քսաներեք հազար երկու հարյուր ութսուն ստրկուհի(?), ընդամենը հինգ բյուր երկու հազար վեց հարյուր յոթանասունհինգ մարդ (մեկ) տարում: Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա» [4, 6]:

Արձանագրության վերոնշյալ հատվածում Արգիշտին նշում է, թե քանի հազար ռազմագերի է տարել: Հավանաբար, խոսքը վերաբերում է Ք.ա. մոտ 785 թվականին: Վերոնշյալ հատվածն ամփոփելով՝ ունենում ենք հետևյալ պատկերը՝ 19.255 պատանի, 10.140 զինվոր, 23.280 ստրկուհի (ընդամենը՝ **52.675 ռազմագերի**):

Ք.ա. մոտ 784 թվականին արքան գրավում է Աբելիանիխի, Անիշթերգա, Կուարգանի, Ուլթուգանի, Էթիունի և մի շարք այլ երկրներ՝

^dHal-di-i-ni uš-ta-bi ma-si-ni-e ^{GIŠ}šú-ri-e ka-ru-ni ^mA-bi-li-i-a-ni-e-hi ^{KUR}e-ba-ni-e

^{KUR}A-ni-iš-[t]e?-er-ga-e ^mQu-ár-za-ni-i-ni ^mUl-tú-za-i-ni ^{KUR}-ni-e te-qu-a-li ^mAr-giš-ti-ka-i
^mAr-giš-ti-še ?a?-li-e ha-ú-bi ^{KUR}E-t[i]-ú-ni-ni ku-ṭè-a-[d]i pa-ri-e ^{KUR}I[š?-qi-gu-lu]-ú-e
pa-ri ^mU-du-ri ^{KUR}E-ti-ú-hi-ni 'a-še ^{SAL}lu-tú pa-ru-bi

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Աբելիանիսի (ցեղի) երկիրը, Անիշթերգա (երկիրը), Կուարզանի (ցեղի) (երկիրը), Ուլթուզանի (ցեղի) երկիրը, զգեպնեց նրանց Արգիշտիի առջև: ...Արգիշտին ասում է.– Գրավեցի Էթիունի (երկիրը): Կտրում էի մինչև [...] (երկիրը), մինչև Ուդուրե Էթիուսի (երկիրը): Մարդ, կին քշեցի» [4, 6]:

Շարունակելով արքան գրում է՝

... i-ku-ka-a-ni ?šá?-[a]-li-e uš-ta-a-di ^{KUR}U-me(?) -lu-[e-di] ha-a-ú-bi ^{KUR}Ur-ia-ni ^{KUR}ṭè-er-[t]u?-bi ha-a-ú-bi ^mMu-ru-zu [...] ga(?!) -ri-ni qar-bi a-gu-nu-ni ma-[nu] gu-nu-šá-a ha-ú-bi 'a-še ^{SAL}[lu-tú pa-ru-bi] [h]a-a-ú-bi ^{URU}U-ba-a-ru-gi-il-du-ú-[ni URU] LUGÁL-nu-[si] [ku-t]è-a-di pa-ri ^{KUR}Ku-[...] -ru-pi-ra pa-ri ^{KUR}Tar-ra-[ba?]...

«Հենց նույն տարում արշավեցի Ումելունի(?) (երկրի) վրա, գրավեցի Ուրյա (երկիրը), Տերտուբի(?) (երկիրը), գրավեցի Մուրուզու (ցեղի) (երկիրը): «Մարե»-ական ժայռը(?), (որ) ամրացված էր, կովում գրավեցի, մարդ, կին քշեցի: Գրավեցի Ուբարուգիլու քաղաքն արքայական [...]: Կտրում էի մինչև Քուրուպերա (երկիրը), մինչև Թար(ե)րա (երկիրը) [...]: Արշավեցի, վերադարձա զորությամբ Քուսունի (երկրի) վրա (...)[4, 6]:

Տեքստի ավարտին արքան նշում է իր հետ բերած ռազմագերիների թվաքանակը՝

VIII(?) [LIM ár-še]^{MEŠ} XI LIM [..... ^{SAL}]ú-e-di-a-ni PAP XX LIM II ME LXXIX ^{LÚ}KU^{MEŠ} MU a-li-ki za-áš-gu-bi a-li-ki še-hi-ri a-gu-bi-e

«Ընդամենը քսան հազար երկու հարյուր յոթանասունինը մարդ (մեկ) տարում: Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա» [4, 6]:

Հաջորդ արշավանքն Արգիշտին ձեռնարկում է Ք.ա. մոտ 783 թվականին: Արգիշտին գրում է՝

^dHal-di-i-ni uš-ta-[bi ma-si-ni-e ^{GIŠ}ú-ri-e ka-ru-ni] ^{KUR}Ha-a-te ka-ru-ni ^mHi-la-ru-a-da-ni [KUR-ni-e te-qu-a-li ^mAr-giš]-ti-i-ka-i ... uš-ta-di ^{KUR}Ha-ti-na-i-d[i] ha-[ú]-bi ^{KUR}Ni-ri-ba-i hu-bi ^{KUR}[..... URU ^m]Ur-ma-ni a-gu-nu-ni ma-a-n[u] gu-nu-ú-šá-a ha-a-ú-bi URU [^mHi-la-ru]-a-da-ni URU LUGÁL-nu-si ha-iú-[bi] ^dHal-di-ni-ni al-su-i-ši-[ni uš]-ta-ia-di ^{KUR}Ha-ti-i-na-a-ši-e an-da-ni ^mTú-a-te-hi-ni-i KUR-ni ['a-a]-du-bi sal-ma-at-hi ^{URU}Me-li-ṭè-a-ni ku-ṭè-a-di ^{URU}Pi-la-i-[ni? ^{KUR}.....]-ni p[a]-ri ki-ri Me-li-a-i-ni ÍD ... ^{KUR}Ma-ar-mu-ú-a-ni ^{KUR}Qa-[la-'a?]-a-ni

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Խաթի (երկիրը), ենթարկեց Խիլարուադային, զգեպնեց Արգիշտիի առջև: ... Հենց այդ նույն օրը (ժամանակ) արշավեցի Խաթինիի (երկրի) վրա, գրավեցի Նիրիբայի դաշտը (...), Խուրմա(?) (քաղաքը), (որ) ամրացված էր, կովում գրավեցի ... Խալդյան մեծությամբ արշավեցի Խաթինիի (երկրի) վրա: Ամբողջ(?) Տուապեիսի երկիրն անջապեցի(?) բուն(?)

Մեյիպիայից: Կտրում էի մինչև Պիթեյրա (քաղաքի) տակ, մինչև Մեծ(?) Մեյիպյան գետը, Մարմուա (և) Կալայա (երկրները)» [4, 6]:

... II LIM V M[E] X[XX]IX ár-še^{MEŠ} VIII LI[M] ?VI? ME XC VIII LÚ TI^{MEŠ} [a-gu-bi] X LIM VIII [LIM] XL ?VII? ^{SAL}lu-tú^{MEŠ} PAP [XX] LIM IX LIM II ME LXXX IV ^{LÚ?}KU^{MEŠ} MU a-[li-k]i za-áš-gu-bi a-li-k[i še]-hi-ri a-gu-bi...

«Երկու հազար հինգ հարյուր երեսունինը պատանի (քեցի), ութ հազար վեց հարյուր իննսունութ երիտասարդ(?), տասնութ հազար քառասունյոթ կին, ընդամենը քսանին հազար երկուհարյուր ութսունչորս մարդ (մեկ) տարում» (2539 պատանի, 8698 երիտասարդ, 18047 կին, ընդամենը՝ **29.284 ռազմագերի**) [4]:

Ք.ա. մոտ 782 թ. Արգիշտին շարունակում է ռազմական արշավանքները՝ ընդարձակելով իր երբեմնի հզոր աշխարհակալությունը: Արքան արշավանքը սկսում է Էթիունի երկրի գրավմամբ:

[^dHal-di-ni uš-ta-bi ma-si]-ni-e ^{GIŠ}ú-ri-e ka-ru-[ni] ^{KUR}E-[ti]-iú-ni-ni24 [KUR-ni25 ^{URU}Qi-hu-ni] KUR-ni-e te-qu-ni25 [^m]Ar-[gi-iš-ti]-ka-a-i...

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Էթիունի (երկիրը), ենթարկեց Կեխունի (քաղաքի) երկիրը, զգեպնեց Արգիշտիի առջև» [4, 6]:

Այս ժամանակաշրջանում Արգիշտին կառուցում է Էրեբունի քաղաքը, որտեղ 6600 մարդ է բնակեցնում:

[VI LIM VI ME LÚ^{MEŠ} gu]-nu-[ši-ni-i e-er-ši-du]-iú-bi iš-ti-ni [^{KUR}Ha-a-te ^{KUR?}u-pa-ni

«Վեց հազար վեց հարյուր մարդ ռազմական բնակեցրի այնտեղ Խաթիյան Ծուպայից» [4, 6]:

i-ku-[ka-ni MU uš-ta-di] ^{KUR}ú-bur-da-ú-e e-di-i-a ^ml[š]?-lu-bu-ra-a-ni [LUGÁL ^{KUR}ú]-bur-[da]-al-hi ha-a-ú-bi ^{KUR}e-ba-a-ni-i-e [^{URU}]r-du-a-ni URU LUGÁL-[nu-si] ha-a-ú-bi ^{KUR}ú-i-šú-ši-ni nu-lu-uš-tú-ú-bi 'a-še ^{SAL}lu-tú ši-ú-bi iš-ti-ni-ni uš-ta-d[i ^{KUR}]Ha-hi-a-ú-e e-di-a

«Հենց այդ նույն տարում արշավեցի Ուրուրդա (երկրի) վրա: Իշ(..)ուրուրա արքային (և) Ուրուրդա-ալիսի երկիրը գրավեցի: Էրդուա քաղաքը գրավեցի, Վիշուշե (երկիրը) հպատակեցրի: Մարդ, կին հանեցի այնտեղից: Արշավեցի Խախիա (երկրի) վրա» [4, 6]:

Վերոնշյալ արշավանքների ընթացքում ևս արքան մեծ թվով ռազմագերիներ է բերում թագավորություն:

VII [LIM VI ME XXXVIII ár-še^{MEŠ} I]II L[IM] VI ME LV LÚ TI^{MEŠ} VIII LIM IV ME XCVII SA[Lú]-e-[di-a-ni PAP X L]IM IX LIM VII ME XC ^{LI?}LÚ?KU^{MEŠ} MU a-li-ki za-áš-gu-[bi a-li]-ki [še-hi]-ri a-gu-bi...

«Ութ հազար վեց հարյուր քառասունութ պատանի (քեցի), երկու հազար վեց հարյուր հիսունհինգ երիտասարդ, ութ հազար չորս հարյուր իննսունյոթ սարկուհի, ընդամենը՝ տասնին հազար յոթ հարյուր իննսուն մարդ (մեկ) տարում» [4, 6]:

Ք.ա. մոտ 781 թվականի արշավանքի վերաբերյալ Արգիշտին գրում է՝

^d[Hal-d]i-ni uš-ta-a-bi ma-a-si-ni-e ^{GIŠ}šú-r[i]-e ka-ru-ni ^{KUR}Aš-šur ^{LÚ}hu-ra-a-d[i]-e ka-ru-ni ^mA-ar-si-ta-ni ^{KUR}-ni-e te-qu-ú-a-li ^mAr-gi-iš-t[i]-ka-a-i ^mAr-[g]i-iš-ti-i-še ^mMe-nu-a-[hi]-ni-še a-li-e ^{K[UR]}Aš-[šur ^{LÚ}A.S]I^{?MEŠ}-ši-e

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց ասորեստանյան զորքը, ենթարկեց Արսիթա (ցեղի) երկիրը, զգեպնեց նրանց Արգիշտիի առջև» [4, 6]:

Շարունակելով արշավանքը արքան գրում է՝

^dHal-[di-ni-ni al-s]u-i-ši-ni a-ri b[i]i^{?-r[i]i}? ^mDa-di-ka-i ^{ŠAD?}Ku-la-ši-ni ^{ŠAD?}ba-ba-ni su-[ú-i-du-lu-bi] XX LIM II LIM IV ME XXXIX ár-še iš-ti-ni za-d[u-bi?] [^{LÚ}A.S]I^{MEŠ} a-šú]-ú-bi ši-ú-bi ^{KUR}e-ba-ni-ú-ka-[ni?] i-[ku-ka-ni MU uš-ta-di] ^{URU}Me-na-ab-šú-ni-e-di ^{URU}Du-qa-ma-a-i-[di] [ha-ú-bi ^{URU}..... URU] LUGÁL-nu-si ^{KUR}e-ba-a-ni-i-e ha-a-ú-[bi] [^{URU}.....] ^{URU}Šá-a-ra-ra-a ^{KUR}Bu-uš-tú-ú-e [KUR-ni-e uš-ta-di ^URU]Ba-bi-lu-i-ni-e ^{KUR}e-ba-ni-e-di [..... ^{KUR}Ba-ru]-ú-a-ta-i-di ^{KUR}Bar-šú-a-i-di

«Խալդյան մեծությամբ հողաշերտը խորտակեցի (?) Դադեի առջև Քուլաշե լեռան: (...) Կասանմեկ (?) հազար չորս հարյուր երեսունինը պատանի այնպեղից քշեցի (?): Ասորեստանցիներին վռնդեցի, սպանեցի, հանեցի երկրիցս: Հենց այդ նույն տարում արշավեցի Մենարշու (քաղաքի) վրա, Դուկկամա (քաղաքի) վրա: (...) քաղաքնարքայական (և) երկիրնիրգրավեցի: (...) Շաարա-Ռասա (քաղաքը) Պուշթու (երկրի): Արշավեցի Բարիլու(ինի) (քաղաքի) երկրիվրա, (...) Բարուաթա (երկրի) վրա, Պարշուա (երկրի) վրա» [4, 6]:

[..... LIM] V LIM [... ME] XL ^{LÚ}KU^{MEŠ} šá-a-li-e [a-li]-ki za-[áš-gu-bi] a-li-ki TI^{IMEŠ} a-gu-[bi]

«Հինգ(?) հազար(?) քառասուն մարդ (մեկ) տարում» [4, 6]:

Վերոնշյալ հատվածում սեպագիր տեքստը վնասված է, ինչը հստակ տեսանելի է տեքստի սկզբի հատվածում՝ մոտ **5040 ռազմագերի**: Ք.ա. մոտ 780 թ. արքան Պուշթու, Թարիունի և այլ երկրներից ու քաղաքներից մի քանի հազար ռազմագերի է իր հետ բերում բուն թագավորության տարածք:

^dHal-[di-ni uš-ta-bi ma]-si-ni-e [^{GIŠ}šú]-ri-e ka-ru-ni ^{KUR}Aš-šur [^{LÚ}hu-ra-di]-e ka-ru-ni ^{KUR}Bu-uš-tú-ni ^{KUR}Tar-i-ú-ni te-q[u-a-l]i ^mAr-gi-iš-ti-ka-i

«Խալդին արշավեց, սեփական զենքին (?) ենթարկեց ասորեստանյան զորքը, ենթարկեց Պուշթու (երկիրը), Թարիունի (երկիրը), զգեպնեց նրանց Արգիշտիի առջև» [4, 6]:

Արքան շարունակում է իր նվաճումները և հաջողությամբ իրականացնում Արխա (^{KUR}Ar-ha), Պուշթու (^{KUR}Bu-uš-tú) երկրների, Աբուրզանի (^{URU}A-bur-za-ni), Կադուկանիու (^{URU}Qa-du-qa-ni-ú) քաղաքների հպատակեցումը⁴:

X LIM VIII LIM VIII ME XXVII ^{LÚ}ta-[ar-šú]-a-[ni]^{MEŠ} šá-a-[li]-e a-li-ki za-áš-gu-bi a-li-ki še-hi-e-ri [a-gu]-bi

⁴ Վերոնշյալ երկրներից բացի հիշատակվում են նաև մի քանի այլ երկրներ և քաղաքներ: Արձանագրության մեջ սեպագիր տեքստի այս հատվածը վնասված է, ինչը դժվարեցնում է արձանագրության հստակ վերծանությունը:

«Տասնութ հազար ութ հարյուր քսանյոթ մարդ (մեկ) տարում (քշեցի): Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա» (ընդամենը՝ **18.827 ռազմագերի**) [4, 6]:

Ք.ա. մոտ 779 թվականի արշավանքի վերաբերյալ արքան գրում է՝

^dHal-di-ni uš-ta-a-bi ma-a-si-ni-e ^{GIŠ}šú-ri-i-e ka-ru-ni ^[KUR]ia-a-ni-ni KUR-ni-e ka-ru-ni
^{KUR}Ma-na-ni ^{KUR}Bu-uš-tú-ni te-qu-a-li ^[m]Ar-giš-ti-ka-a-i

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Իյանե երկիրը, ենթարկեց Մանա (երկիրը), Պուշթու (երկիրը), զգեպնեց նրանց Արգիշտիի առջև» [4, 6]:

Նույն թվականին արքան գրավում է նաև Էրատեիլի քաղաք (^{URU}E-ra-tè-[li-e) և Մյուս Էրատեիլե քաղաքը (^[URU]E-ra-tè-li-e ú-li ha-ú-b[i]): Գրավելով մի շարք քաղաքներ և երկրներ՝ Արգիշտին թագավորության սահմանները հասցնում է ընդհուպ Վիխիք արաղաքը⁵:

X LIM VIII LIM II ME XLIII ^{LÚ}ta-ar-šú-a-ni-e MU a-li-ki za-áš-gu-ú-bi a-li-ki še-hi-ri-e a-gu-bi

«Տասնութ հազար երկու հարյուր քառասուներեք մարդ (մեկ) տարում (քշվեցի): Ոմանց սպանեցի ոմանց կենդանի տարա» (ընդամենը՝ **18.243 ռազմագերի**) [4, 6]:

Արգիշտի Ա-ը հաջորդ տարի՝ Ք.ա. մոտ 778 թ.-ին էլ շարունակում է իր աշխարհակալության ընդարձակումը՝

^dHal-di-i-ni-ni al-su-i-ši-ni uš-ta-di ^{KUR}Ma-na-i-di ha-iú-bi ^{KUR}Ir-ki-ú-ni-ni ku-tè-a-di pa-ri ^{KUR}Aš-šur-ni-ni ^{KUR}al-ga-ni VI LIM IV ME LXXI ^{LÚ}?KUMES [M]U...

«Խալդյան մեծությամբ արշավեցի Մանա (երկրի) վրա, գրավեցի Իրքիունե (երկիրը), կտրում էի մինչև Ասորեստանյան հարթավայրը: Վեց հազար չորս հարյուր յոթանասունմեկ մարդ (մեկ) տարում (քշեցի)» (ընդամենը՝ **6471 ռազմագերի**) [4, 6]:

Ք.ա. մոտ 777 թվականին արքան շարժվում է Մանա, Պուշթու և այլ երկրներ՝

^dHal-di-ni-ni al-su-i-ši-ni uš-ta-di ^{KUR}Bu-uš-tú-e-di [h]a-ú-bi ^{KUR}Áš-qa-ia-i hu-bi ^{KUR}Šá-ti-ra-ra-ga-ni an-da-ni ^{KUR}Ú-gi-iš-ti-ni `a-al-du-bi sal-ma-at-hi ^{KUR}Ú-ú-ši-ni ku-tè-a-di pa-ri-e
^{ŠAD?}A-la-tè-i-e ^{ŠAD?}ba-ba-a-ni

«Խալդյան մեծությամբ արշավեցի Պուշթու (երկրի) վրա, գրավեցի Առկայայի դաշտը Շաթիրա-Ռազա (երկրից): Ամբողջ (?) Ույիշթե (երկիրը) անջատեցի (?) բուն (?) Ուլշե (երկրից): Կտրում էի մինչև Ալատեյե լեռը» [4, 6]:

[VII] LIM VIII ME LXXIII ^{LÚ}ta-ar-šú-a-[ni šá-a-l]i-e a-li-ki za-áš-gu-bi a-li-[ki še-hi-ri a-gu]-bi

«Յոթ հազար հարյուր յոթանասուներեք մարդ (մեկ) տարում (քշեցի): Ոմանց սպանեցի, ոմանց կենդանի տարա» (ընդամենը՝ **7073 (7873) ռազմագերի**) [4, 6]:⁶

Ք.ա. 776 թ. Արգիշտին դարձյալ արշավում է Ուրմիա լճի հարավ-արևելք ընկած շրջաններ՝

⁵ Վիխիքա քաղաքը Պուշթու երկրի քաղաքներից էր:

⁶ Տարբեր սկզբնաղբյուրներում թիվը տարբերվում է (7073 կամ 7873):

[^mA]r-giš-ti-še a-li-e še-ip(?)-tú si-na-[...]a(?) [^{LÚ}]A.SI^{MEŠ}-ši-e ^{LÚ}ú-e-li šú(!)-si-ni-e [.....] [^{UJRU}]Si-ra-ni qa-ab-qa-ru-u-bi nu-na-bi ^{KUR}Ma-na-[a]-ni

«Արգիշտին ասում է. – (...) զորքի մեջ՝ զնդի առջև, արշավեցի (և) Սիրա (քաղաքը) վերապաշարեցի Մանա (երկրի)» [4, 6]:

III LIM II ME LXX ^{LÚ}ta-ar-šú-ú-[a-ni MU] a-li-ki za-áš-gu-bi a-li-ki še-hi-[ri a-gu-bi]

«Երեք հազար երկու հարյուր յոթանասուն մարդ (մեկ) տարում (քշեցի)» (ընդամենը՝ **3270 ռազմագերի**) [4, 6]:

Հաջորդ տարի՝ Ք.ա. մոտ 775 թ.-ին, Արգիշտին շարունակում է նվաճումները՝

^dHal-di-ni uš-ta-bi ma-si-ni-e ^{GIŠ}šú-ri-i-e ka-ru-ni ^{KUR}Tu-a-ra-a-ši-ni-e-i hu-[bi] pa-ri ^{ŠAD?}Gur-qu-ú-e ka-ru-ni ^{KUR}Ma-na-a-ni ^{LÚ}A.SI^{MEŠ}-i-e te-qu-a-li ^mAr-giš-ti-ka-i

«Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Տուարածյան դաշտը մինչև Քուրքու (լեռը), ենթարկեց Մանա (երկրի) զորքը, զգեպնեց նրանց Արգիշտիի առջև ...» [4]:

Վերոնշյալ արշավանքից հետո արքան թագավորության տարածք է բերում ընդամենը **13.979 ռազմագերի**:

^{SAL}ú-e-di-a-ni iš-ti-ni-ni pa-ru-bi X LIM III LIM IX ME LXXIX ^{LÚ}ta-ar-šú-a-ni^{MEŠ} MU a-li-ki za-áš-gu-bi a-li-ki še-hi-ri a-gu-bi

Ք.ա. մոտ 774 թ. արքան շարունակում է իր թագավորության հզորացումը՝ նվաճելով մի շարք երկրներ:

^dHal-di-ni uš-ta-bi ma-si-ni-e ^{GIŠ}šú-ri-i-[e] ka-ru-ni ^{KUR}Ma-na-ni ^{KUR}ni-e ka-ru-ni ^{KUR}E-ti-ú-ni te-e-qu-ú-a-li-e ^mAr-gi-iš-ti-i-ka-a-[i]

Արգիշտին գրում է. «Խալդին արշավեց, սեփական զենքին(?) ենթարկեց Մանա երկիրը, ենթարկեց Էթիունի (երկիրը), զգեպնեց նրանց Արգիշտիի առջև» [4]:

Էթիունի երկրի նվաճումից հետո արքան շարունակում է արշավանքը և գրավում Էրիախի (ցեղի) երկիրը, Կաթարգայան (ցեղի) երկիրը՝ հասնելով մինչև Իշկիգուլու երկիրը: Արշավանքի ընթացում կռվով գրավում է Վիտերուխիական երկրի Ամիդու քաղաքը:

Վերոնշյալ հատվածում արձանագրությունը վնասված է և անհնար է հասկա-նալ, թե քանի հազար ռազմագերի է հպատակեցրել արքան: Սակայն, հաշվի առնելով նախորդ արշավանքներից հետո բերված ռազմագերիների թիվը՝ ակնհայտ է, որ այս արշավանքի ընթացքում ևս արքան մեծ թվով ռազմագերիներ է բերել:

Հաջորդ տարի՝ Ք.ա. մոտ 773 թ.-ին, Արգիշտին գրավում է Թարիու երկիրը, 11 ամրոցներ և այլն: Նույն տարում արքան գրավում է նաև Իշկիգուլու երկիրը: Սեպագիր տեքստում այս հատվածը վնասված է և ռազմագերիների հստակ թիվ չի պահպանվել: Ք.ա. մոտ 772 թ. արշավանքի վերաբերյալ արքան գրում է՝

URU^{MEŠ} GIBÍL-bi `a-še ^{SAL}lu-tú a-gu-bi ^{KUR}Bi-[a-na-i-di] PA[P] XX(?) LIM IV LIM VIII ME XIII ^{LÚ?}KU^{MEŠ} MU a-li-ki za-áš-gu-bi a-li-ki TI^{MEŠ} [a-gu-bi]

«Քաղաքները այրեցի, մարդ, կին փարա դեպի Բիսինելե (երկիրը): Ընդամենը քսան (?)չորս հազար ութ հարյուր փասներեք մարդ (մեկ) փարում (քշեցի)» (ընդամենը՝ **24.813 ռազմագերի**) [4]: Տարեգրության վերջին սյունակը մեզ կարևոր տեղեկություն չի հաղորդում:

Աղյուսակ 1.Սեպագիր տեքստերում ռազմագերիների թիվն ըստ Հարությունյանի, Սալվինիի և Մելիքիշվիլիի:

Տարեթիվ	Հարությունյան	Սալվինի	Մելիքիշվիլի
Ք.ա. մոտ 785 թ.	52.675	52.675	52.675
Ք.ա. մոտ 784 թ.	20.279	22.179	20.279
Ք.ա. մոտ 783 թ.	29.284	29.284	29.284
Ք.ա. մոտ 782 թ.	19.790	19.790	19.790
Ք.ա. մոտ 781 թ.	22.439/5.40=27.479	20.439/5.140=20.953 11.439/5.140=16.579	11.439/5.40=16.479
Ք.ա. մոտ 780 թ.	18.827	18.827	18.827
Ք.ա. մոտ 779 թ.	18.243	18.243	18.243
Ք.ա. մոտ 778 թ.	6.471	6.481/6.471	6.471
Ք.ա. մոտ 777 թ.	7.873	7.873	7.173
Ք.ա. մոտ 776 թ.	3.270	3.270	3.270
Ք.ա. մոտ 775 թ.	13.979	13.979	13.979
Ք.ա. մոտ 774 թ.	-	-	-
Ք.ա. մոտ 773 թ.	-	-	-
Ք.ա. մոտ 772 թ.	24.813	24.813	24.813
Ընդամենը	242.983	238.369	231.283

Աղյուսակ 1-ից կարելի է ենթադրել, որ իրենց ռազմական արշավանքների ընթացքում ուրարտացիները Ք.ա. 785-772 թթ. ընթացքում հպատակեցրել են **մոտ 300.000 ռազմագերիների** (թիվը գրվել է՝ հաշվի առնելով, որ Ք.ա. մոտ 774 և Ք.ա. մոտ 773 թթ. տվյալները բացակայում են): Սակայն «Խորխոռոյան տարեգրությունում» Արգիշտին թագավորություն բերված ռազմագերիների թվի հետ միասին նշում է, որ մի մասին սպանել է: Գրեթե բոլոր թվական տվյալների կողքին արքան գրում է. «*ոմանց սպանեցի, ոմանց կենդանի փարա*» արտահայտությունը, ինչից ակնհայտ է, որ իսկապես, ռազմագերիների մի մասին արքան սպանել է: Հավանաբար արքան հպատակեցրել է մոտ 300.000 ռազմագերիների, սակայն թագավորության տարածք է տարել միայն կեսին՝ մոտ 150.000-ին:

Թագավորության տարածք բերված ռազմագերիների թիվը խիստ մեծ էր: Հարց է առաջանում թե ինչու էր արքային անհրաժեշտ այսքան մեծ թվով ռազմագերիներ,

Եթե ընդամենը մեկ ուղղությամբ արշավելով արքան հազարից ավելի ռազմագերիներ էր բերում մայրաքաղաք:

Թագավորությունում ռազմագերիների կատարած հիմնական գործառույթները: Թագավորությունում հիմնական ծանր աշխատանքները կատարում էին ստրուկները: Վերջիններս կառուցում էին քաղաքներ, ամրոցներ, ճանապարհներ, պաշտպանության համար նախատեսված հատուկ նշանակության շինություններ: Ստրուկների մի մասը ներգրավվում էր տնտեսական աշխատանքներին: Փորձենք ներկայացնել թե ռազմագերիները որ բնագավառներում և ինչ աշխատանքներ էին կատարում:

Ռազմական	Տնտեսական	Այլ
Անհրաժեշտության դեպքում համալրում էին բանակը:	Արքունական տնտեսություն Արքունիքում ծառայություն էին կատարում:	Քաղաքաշինություն Թագավորությունում հիմնական ծանր աշխատանքները կատարում էին ստրուկները: Նրանք կառուցում էին քաղաքներ, բերդեր, տաճարներ և այլն:
Մասնակցում էին արքայի կազմակերպած ռազմական արշավանքներին:	Տաճարային տնտեսություն Թագավորը որոշ քանակությամբ ստրուկներ էր տալիս տաճարներին:	Մասնակցում էին ջրանցքների կառուցմանը, անցկացնում էին ոռոգման համակարգեր և այլն:
	Մասնավոր տնտեսություն Որոշ զինվորականների լավ ծառայության դիմաց թագավորը որոշ քանակությամբ ստրուկներ էր տալիս, որոնք էլ դառնում էին տվյալ զինվորականի ծառայողները:	
	Անասնապահությամբ էին զբաղվում:	
	Այգեգործությամբ էին զբաղվում:	
	Խաղողագործությամբ էին զբաղվում:	

Հարց է ծագում, թե որ բնագավառում թվով քանի ստրուկ է ներգրավված եղել: Թիվը հստակեցնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բանակի թվին և հասկանալ, թե մոտավորապես քանի ստրուկ է մասնակցել ռազմական արշավանքներին:

Վանի թագավորության արքաները քայլեր էին ձեռնարկում թագավորության ընդարձակման ուղղությամբ, ուստի բանակի համալրումը խիստ կարևոր հարց էր: Հատկապես կարևոր էր այն դեպքում, երբ մի տարվա ընթացքում արքաները տարբեր ուղղություններով էին իրականացնում ռազմական արշավանքները: Օրինակ՝ Ուիտերուխի, Լուշա, Կատարգա երկրների դեմ կատարված արշավանքի ընթացքում ուրարտական բանակը կազմված է եղել՝ **15.000 հետևակից, մի քանի հազար 460 հեծյալներից, 66 մարտակառքերից** [3]: Մեկ այլ արշավանքի ընթացքում բանակը կազմված էր՝ **9174 հեծյալներից, 2704 հետևակներից, 106 մարտակառքերից**⁷:

Ռազմագերիների մի մասը, ենթադրում ենք, որ համալրել են բանակը [2]: Սակայն, անշուշտ, ռազմագերիների թիվը փոքր էր, քանի որ արշավանքների ընթացքում վերջիններիս կողմից ապստամբության վտանգ կառաջանար:

Հավանաբար, ստրուկների շահագործումն ինչպես Ուրարտուում, այնպես էլ Ասորեստանում, մեծ չափերի է հասել: Պատահական չէ, որ Ք.ա. 7-րդ դարում ուրարտացի ու ասորեստանցի փախստականներ են տեղափոխվել Արմե-Շուպրիա (Սասուն), որտեղ պայմանները բավականին մեղմ էին [7, 3]:

Արդեն Ք.ա. 7-րդ դարում Ուրարտուի և Ասորեստանի շահագործվող տարրերի փախուստը մեծ չափերի էր հասել: Ասվածի վառ ապացույց է այն, որ Ասորեստանի թագավոր Ասախադդունը (Ք.ա. 681-669 թթ.) Ք.ա. 673 թվականին ստիպված էր ռազմական արշավանք ձեռնարկել դեպի Արմե-Շուպրիա՝ վերադարձնելու այստեղ ապաստանած փախստականներին [1, 8, 3]:

Թագավորի համաձայնությամբ ռազմագերիների մի մասը բաժին էր հասնում զինվորներին: Կարելի է ենթադրել, որ թեպետ ոչ բոլոր զինվորները, բայց և այնպես, մասնավոր տնտեսություն են ունեցել՝ ռազմագերիներին օգտագործելով որպես աշխատողուժ:

Արշավանքների ընթացքում, երբ արքան լքել է նվաճած երկիրը, հավանաբար, զինվորները նույնպես ռազմագերիներ են բերել:

Մասնավոր տնտեսությունները ևս հիմնված էին ստրուկների և ռազմագերիների շահագործման վրա, որոնց ձեռք էին բերում նաև առևտրի միջոցով [4, 10, 3]⁸:

⁷Սարդուրյան տարեգրության մեջհիշատակվում էին 350.000 հետևակ և հեծելազոր: Սա բավականին մեծ ուժ ժամանակի համար:

⁸ Վանի թագավորությունում ստրուկներ ձեռք բերելու հիմնական աղբյուրը պարբերաբար վարվող պատերազմներն էին: Յուրաքանչյուր արշավանքի ընթացքում ուրարտական արքաները թագավորության տարածք էին բերում հարյուրավոր ռազմագերիներ, որոնց թիվը երբեմն հասնում էր հազարների: «Խորխոռյան տարեգրության» տեքստերի համաձայն՝ Արգիշտի Ա-ը Վանի թագավորություն է տեղափոխել 150-200 հազար մարդ: Արձանագրություններում նշվում է նաև, որ ռազմագերիների մի մասին սպանել են, իսկ մյուս մասին՝ կենդանի տարել: Հաշվի առնելով, թե որքան կարևոր էին

Վանի թագավորությունում հազարավոր ռազմագերիներ շինարարական ծանր աշխատանքներ էին կատարում: Ռազմագերիների մի մասը վերածվում էր ստրուկների՝ օգտագործվելով տաճարային, վարչական, ռազմական վերնախավին պատկանող տնտեսություններում: Իսկ մյուս մասին ընդգրկում էին գյուղական համայնքների մեջ: Ստրուկները մասնակցում էին քաղաքների, ամրոցների, արհեստական լճերի, ոռոգիչ համակարգերի, ջրանցքների կառուցմանը: Սակայն տեղեկություններ չեն պահպանվել այն մասին, թե ինչպիսին է եղել ստրուկների դերը տաճարային և արքայական տնտեսություններում:

Ամփոփելով պետք է նշել, որ Արգիշտի Ա-ի [9, 5] կառավարման ժամանակաշրջանում ուրարտացիների կողմից հպատակեցված ստրուկների թիվը 300.000-ի էր հասնում: Արքան միայն մեկ արշավանքի ընթացքում հազարավոր ստրուկներ էր բերում թագավորության տարածք: Ք.ա. 785-772 թթ. ընթացքում ուրարտացիները հպատակեցրել են մոտ **300.000 ռազմագերի**: Սպանելով մի մասին, թագավորության տարածք են բերվել **մոտ 150.000 ռազմագերիներ** (թիվը գրվել է՝ հաշվի առնելով, որ Ք.ա. մոտ 774 և Ք.ա. մոտ 773 թթ. տվյալները բացակայում են):

«Խորխոռյան տարեգրությունում» Արգիշտին թագավորության տարածք բերված ռազմագերիների թվի հետ միասին նշում է, որ մի մասին սպանել է: Ուստի, կարելի է ենթադրել, որ արքան հպատակեցրել է մոտ 300 հազարին, սակայն թագավորության տարածք է տարել միայն մի մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 137-8:
- [2] **Գրեկյան Ե.**, «Բիայնիլի-Ուրարտու. Պետություն և հասարակություն (պատմահնագիտական հետազոտություն)» դոկտորական ատենախոսություն, Երևան, 2016, էջ 209-11:
- [3] **Հարությունյան Ն. Վ.**, Ուրարտու պետության կազմավորումը, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հատոր Ա, Երևան, 1971, էջ 342-8:
- [4] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատոր Ա, Երևան, 2007, էջ 161-73:
- [5] **Ղափանցյան Գ.**, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 156:
- [6] **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, сс.157-8.
- [7] **Меликишвили Г. А.**, Некоторые вопросы социально-экономической истории Наири-Урарту, “Вестник древней истории”(ВДИ), 1951, N 4, сс. 31-2.
- [8] **Пиотровский Б. Б.**, Ванское царство (Урарту), сс. 85-6:

ռազմագերիներն ուրարտական տնտեսության համար, կարելի է ենթադրել, որ սպանել են միայն անաշխատունակներին: Հնարավոր է, որ սպանել են նաև այլ անձանց՝ մյուս ստրուկներին վախեցնելով, թե ինչ ճակատագրի կարժանանան չենթարկվելու դեպքում: Ռազմագերիներին նաև վերաբնակեցնում էին: Արձանագրություններից տեղեկանում ենք, որ Արգիշտի Ա-ը Ք.ա. 782 թ. 6600 ռազմագերիների (Խաթե և Ծուփանի երկրներից) վերաբնակեցրել է Էրեբունիում:

- [9] **Redgate A. E.**, The Peoples of Europe. The Armenians, Oxford, 2000, p. 30.
- [10] **Zimansky P.**, Ecology and Empire: The Structur of the Urartian State. Studies in Ancient Oriental Civilization, no. 41, Chicago, 1985, p. 58.
- [11] **Salvini M.**, Corpus dei testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi, Roma, 2008, A 8-3, pp. 332-45.

Բաղումյան Սիրանուշ

ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ԿՈՂՄԻՑ ՀՊԱՏԱԿԵՑՎԱԾ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԹՎԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՓՈՐՁ

Բանալի բառեր՝ Ուրարտու, թագավորություն, Արգիշտի Ա, ռազմագերի, «Խորխորսյան տարեգրություն», ռազմական արշավանք, տնտեսություն, աշխատանք, զինվորական, գրավել:

Վան (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորության ժամանակաշրջանի կարևոր հիմնահարցերից է ռազմագերիների թվի հստակեցման խնդիրը: Հիմք ընդունելով Արգիշտի Ա-ի թողած «Խորխորսյան տարեգրությունը»՝ փորձել ենք ներկայացնել ռազմագերիների թիվը: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ թագավորությունը հասել էր հզորության գագաթնակետին: Այս ժամանակաշրջանում Արգիշտին հպատակեցրել է մոտ 300.000 ռազմագերու, իսկ մի մասին սպանելով թագավորության տարածք է բերել մոտ 150.000 ռազմագերիների, ովքեր հիմնական կատարել են ծանր աշխատանքներ:

Багумян Сирануш

ПОПЫТКА УТОЧНЕНИЯ ЧИСЛА ВОЕННЫХ ПЛЕННИКОВ АРГИШТИ I

Ключевые слова: Урарту, царство, Аргишти I, военные пленники, «Хорхорская летопись», военный поход, экономика, работа, военный, завоевать.

Одним из наиболее важных вопросов в Ванском (Бианили, Урарту, Арарат) царстве является вопрос определения числа военнопленных. На основе «Хорхорской летописи» Аргишти I мы попытались представить число военнопленных. В то время, царство достигло своего апогея. За это время Аргишти подчинил себе около 300.000 военнопленных, убил многих из них и привел с собой около 150.000 военнопленных, которые выполняли основные тяжелые работы.

ATTEMPT TO REFINE THE NUMBER OF MILITARY CAPTIVES BY ARGISHT I

Key words: Urartu, kingdom, Argishti I, dependent, 'Horhor Chronicle', military campaign, economy, work, soldier, to conquer.

One of the most important issues in the Van (Biannili, Urartu, Ararat) kingdom is the issue of determining the number of war prisoners. Based on Argishti I's 'Horhor Chronicle', we have tried to present the number of the captives. During that time, the kingdom reached the height of its power: Argishti subjugated more than 300.000 prisoners of war and killing many of them brought about 150.000 captives with him to carry out the hard work.